Էմանուել Մակրոն

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սա մեր պայքարն է հանուն Ֆրանսիայի

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Արտակ Հերիքյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2018

Bookmark

Բովանդակություն

Նախաբան 9

Գլուխ 1 – Ով եմ ես 13

Գլուխ 2 – Ինչին եմ հավատում 39

Գլուխ 3 – Ովքեր ենք մենք 51

Գլուխ 4 – Մեծ փոխակերպում 63

Գլուխ 5 – Ֆրանսիան, որին մենք ձգտում ենք 77

Գլուխ 6 – Ներդրումներ մեր ապագայում 89

Գլուխ 7 – Արտադրել Ֆրանսիայում և փրկել մոլորակը 107

Գլուխ 8 – Կրթել մեր բոլոր երեխաներին 121

Bookmark

Գլուխ 9 – Կարողանալ ապրել սեփական աշխատանքով 135

Գլուխ 10 – Շատ բան անել նրանց համար, ովքեր քիչ ունեն 151

Գլուխ 11 – Հաշտեցնել Ֆրանսիաները 171

Գլուխ 12 – Հոգ տանել Ֆրանսիայի մասին 189

Գլուխ 13 – Պաշտպանել ֆրանսիացիներին 207

Գլուխ 14 – Տեր կանգնենք մեր ճակատագրին 223

Գլուխ 15 – Վերափոխել Եվրոպան 249

Գլուխ 16 – Իշխանությունը վերադարձնել նրանց, ովքեր հաջողության են հասնում 271

Վերջաբան 295

Bookmark

Նախաբան

Աշխարհի իրականությանը բախվելով՝ մենք կվերագտնենք հույսը:

Ոմանք մտածում են, որ մեր երկիրն անկում է ապրում, որ ամենավատը դեռ առջևում է, որ մեր քաղաքակրթությունը վերանում է: Որ հորիզոնում միայն նահանջ է կամ քաղաքացիական պատերազմ: Որ աշխարհի մեծ փոխակերպումներից պաշտպանվելու համար պետք է ժամանակը հետ պտըտենք և օգտվենք անցած դարի դեղատոմսերից:

Մյուսները կարծում են, թե Ֆրանսիան կարող է շարունակել դանդաղ ներքև սահել: Որ քաղաքական այլընտրանքների խաղը բավական է շնչելու համար: Ձախերի ու աջերի անվերջ հերթագայությունից հետո տարիներ շարունակ նույն դեմքերն են, նույն մարդիկ...

Համոզված եմ՝ նրանք բոլորը սխալվում են: Այդ նրանց մոդելները, դեղատոմսերը հաջողություն չեն ունեցել: Երկիրը չի ձախողվել: Ֆրանսիան աղոտ գիտի դա, զգում է: Ու այդտեղից էլ սկսվում է ժողովրդի և կառավարության «ապահարզանը»:

Համոզված եմ՝ մեր երկիրն ունի առաջ գնալու ցանկություն,

ուժ, կարողություն: Նա պատմություն ունի և ժողովուրդ՝ այն կերտելու համար:

Մենք նոր դարաշրջանում ենք: Գլոբալացումը, թվային տեխնոլոգիաները, մեծացող անհավասարությունը, կլիմայական վտանգը, աշխարհաքաղաքական հակամարտությունները և ահաբեկչությունը, Եվրոպայի պառակտումը, արևմտյան հասարակությունների ժողովրդավարական ճգնաժամը, մեր հասարակության սիրտը մտած կասկածը հիմնովին փոխվող աշխարհի ախտանիշներն են:

Այս մեծ փոխակերպմանը մենք չենք կարող պատասխանել նույն մարդկանցով, նույն գաղափարներով՝ պատկերացնելով, թե հնարավոր կլինի հետ գնալ, մտածելով պարզապես վերակառուցել կամ նորին հարմարեցնել հասարակության կազմակերպման մեր ձևերը կամ, ինչպես ոմանք սիրում են ասել, մեր «մոդելը», որը ոչ մեկին և նույնիսկ մեզ չի ոգեշնչում:

Ու նաև չենք կարող ֆրանսիացիներին խնդրել անվերջ չարչարվել՝ նրանց խոստանալով ելք ճգնաժամից, որը մեկը չէ, երկուսը չէ: Ավելի քան երեսուն տարի մեր առաջնորդների բռնած անփոփոխ դիրքն է մեր քաղաքացիների հոգնածության, թերահավատության և անգամ զզվանքի պատճառը:

Միասին պետք է նայենք ճշմարտության երեսին և գործնականում քննարկենք մեծ փոփոխությունները: Ո՞ւր պետք է գնանք և ո՞ր ճանապարհներով: Որքա՞ն կտևի ճամփորդությունը: Որովհետև այդ ամենը մեկ օրում չի լինելու:

Ֆրանսիայի քաղաքացիներն ավելի լավ են գիտակցում ժամանակի նոր պահանջները, քան նրանց առաջնորդները: Նրանք պակաս կոմֆորմիստ են, քիչ են կառչած նախապաշարմունք-գաղափարներից, որոնք երաշխավորում են ինտե-

լեկտուալ հարմարավետություն քաղաքական կյանքում:

Բոլորս պետք է ազատվենք մեր սովորույթներից: Պետությունը, քաղաքական պատասխանատուները, բարձրաստիճան պաշտոնյաները, տնտեսական առաջնորդները, արհմիությունները, մյուս շահագրգիռ խմբերը:

Սա մեր պարտականությունն է, և սխալ կլինի ստատուս քվոյից խուսափելը կամ դրան հարմարվելը:

Մենք վարժվել ենք անհանգստացնող մի կենսաձևի, որին չենք ցանկանում անուն տալ, ոչ էլ բաց աչքով նայել: Եվ ուրեմն գանգատվում ենք, մռնչում: Սկսվում են ողբերգությունները: Հուսահատությունը՝ նույնպես: Վախն է գլուխ բարձրացնում: Խաղում ենք: Փոփոխություն ուզում ենք՝ իրականում չուզելով:

Պետք է գործենք, եթե ցանկանում ենք առաջ շարժվել, պատմության ճիշտ հունով մեր երկիրը հասցնել հաջողության, ունենալ 21-րդ դարին վայել բարգավաճ պետություն: Ելքը մեր մեջ է: Այն կախված չէ առաջարկների ցանկից, որը չի իրականացվելու: Խարխուլ փոխզիջումներ կառուցելով՝ ելքը չենք գտնի: Այն կգտնենք տարբեր մոտեցումների շնորհիվ: Դա ենթադրում է խորքային ժողովրդավարական հեղափոխություն: Ելքը ժամանակ կպահանջի: Այն կախված է մի բանից՝ մեր միասնությունից, համարձակությունից, միասնական կամքից:

Հենց ժողովրդավարական այդ հեղափոխությանն եմ ես հավատում: Ու մինչ մեզ կպարտադրվի հեղափոխություն, որին ստիպված կլինենք հարմարվել, մենք կառաջնորդենք մեր հեղափոխությունը Ֆրանսիայում ու Եվրոպայում:

Այդ հեղափոխությունն եմ փորձել նկարագրել հաջորդող էջերում: Այնտեղ ծրագրեր չեք գտնի ու ոչ մի բան այն հա-

զարավոր առաջարկներից, որ մեր քաղաքական կյանքը նմանեցրել են խորտակված հույսերի պատկերագրքի: Այս էջերում ավելի շուտ կան ապագա, պատմություն, կամք:

Քանզի ֆրանսիացիները կամքի տեր են, ես ցանկանում եմ ծառայել այդ կամքին, որն անընդհատ անտեսել են կառավարիչները: Ցանկանում եմ ծառայել այդ կամքին, որովհետև, երկրիս օգտակար լինելուց բացի, այլ երազանք չունեմ: Ահա թե ինչու եմ որոշել առաջադրվել Ֆրանսիայի Հանրապետության նախագահի թեկնածու:

Գիտեմ պաշտոնի պահանջները: Գիտեմ՝ ծանր ժամանակներ են: Բայց որևէ այլ ընտրություն ինձ ավելի պատվաբեր չի թվում, քանի որ ընտրությունս ներդաշնակ է այն ամենին, ինչ դուք եք ուզում անել: Ներդաշնակ է Ֆրանսիային, որը պետք է վերակառուցենք՝ վերագտնելով մեր էներգիան, մեր հպարտությունը: Ֆրանսիային պետք է վերադարձնենք նախաձեռնողականությունն ու հավակնոտությունը:

Խորապես համոզված եմ, որ 21-րդ դարը, ուր վերջապես թևակոխում ենք, լի է խոստումներով, փոփոխություններով, որոնք կարող են մեզ ավելի մեծ երջանկություն բերել:

Սա եմ առաջարկում ձեզ:

Սա կլինի հանուն Ֆրանսիայի մեր պայքարը, որից ավելի գեղեցիկ բան ես չգիտեմ:

ԳԼՈՒԽ 1

Ով եմ ես

Գիրքը գրելու արկածախնդրության ժամանակ պարտավոր եմ ձեզ ասել՝ որտեղից եմ և ինչին եմ հավատում: Հանրային կյանքն իրականում բացատրությունների հնարավորություն չի տալիս: Ես 38 տարեկան եմ: Ոչինչ չէր կանխորոշում, որ մի օր էկոնոմիկայի նախարար կդառնամ[1], կմտնեմ քաղաքականություն: Իրոք, չեմ կարող երկար-բարակ բացատրություններ տալ իմ անցած ճանապարհի մասին: Ես պարզապես արածի արդյունքն եմ տեսնում, որին չէի հասնի առանց պատասխանատվության ու ազատության անկրկնելի համի զգացողության: Նաև բախտի, անշուշտ:

Ծնվել եմ 1977-ի դեկտեմբերին Պիկարդի շրջկենտրոն Ամյենում[2], բժիշկների ընտանիքում: Ինչպես այն ժամանակ էին ասում, աշխատասիրության ու տաղանդի շնորհիվ էր այդ ընտանիքն առաջ գնացել ու բուրժուազիայի մեջ մտել: Տատեր-

[1] Էմանուել Մակրոնն էկոնոմիկայի, արդյունաբերության և ՏՏ նախարար է նշանակվել 2014 թ. օգոստոսին: Իրականացրել է ձեռնարկատիրությանն ու բիզնեսին օգնող բարեփոխումներ: 2 տարի անց, 2016 թ. օգոստոսին, հրաժարական է տվել՝ նախագահական ընտրություններին մասնակցելու նպատակով: (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

[2] Գտնվում է Ֆրանսիայի հյուսիսում:

պապերս եղել են ուսուցիչ, երկաթուղային, սոցիալական աշխատող և կամուրջների ու մայրուղիների ինժեներ: Բոլորը համեստ միջավայրից էին: Լեռնային Պիրենեյների և Պիկարդիի արանքում գտնվող ֆրանսիական շրջանում հանրապետականների վերելքի հետ է ինչ-որ իմաստով կապվում ընտանիքիս պատմությունը: Գիտելիքի արժևորումն էր հանրապետական գաղափարախոսության հաջողության գրավականը: Դա լավ հեռանկար էր բացում հատկապես բժշկություն սովորող նոր սերնդի առաջ: Գլխապտույտ կարիերայի արքայական հնարավորություն էր դա, և պապիկներս երեխաներին կողմնորոշում են դեպի բժշկագիտություն: Եվ այսպես, ծնողներս, հիմա նաև եղբայրս ու քույրս բժիշկներ են: Ես միակն եմ, որ այդ ուղղությամբ չգնացի: Պատճառն ամենևին բժշկությունն ատելը չէր, որովհետև միշտ էլ հետաքրքրվել եմ գիտությամբ:

Բայց այն տարիքում, երբ ընտրում են կյանքի ուղին, ցանկանում էի այնպիսի աշխարհ, արկած, որն ամբողջովին իմը կլիներ: Որքան ինձ հիշում եմ, միշտ էլ իմ ուղին ինքնուրույն ընտրելու ցանկություն եմ ունեցել: Ծնողների հարցում բախտս բերել է: Նրանք ինձ խրախուսում էին աշխատել, կրթությունը համարում էին ազատության նախավարժանք: Նրանք ինձ ոչինչ չեն ստիպել, թողել են դառնալ այն մարդը, որը ե՛մ ես: Եվ ուրեմն, ընտրեցի իմ կյանքը՝ ասես անգիր իմանալով, թե ինչպես է անցնելու դրա ամեն փուլը: Ամեն ինչ այդքան էլ հեշտ չէր, բայց պարզ էր: Պետք էր շատ աշխատել, ինչն էլ սրտովս էր: Ձախողումներ ունեցա, երբեմն՝ ցավոտ, բայց չշեղվեցի իմ ընտրած ճանապարհից:

Ուսման տարիներին ամրապնդվեց համոզմունքս, որ ոչինչ այնքան թանկ չէ, որքան սեփական ապագայի ազատ ընտ-

ությունը, քո կազմած ծրագրերը կյանքի կոչելու մղումը, տաղանդիդ իրացումը, որքան մեծ կամ փոքր լինի: Տաղանդը յուրաքանչյուրին է տրված: Ի վերջո, այս համոզմունքը որոշիչ եղավ իմ քաղաքական հանձնառության համար: Ավելի շատ ուշադրություն դարձրեցի ստատուս քվոյի, դասերի, արտոնյալ խմբերի վրա հիմնված հասարակության[1] մեջ տիրող անարդարությանը, սոցիալական անվստահությանը և այն ամենին, ինչը խանգարում է անհատի իրացմանը:

Ինձ տատիկս է սովորեցրել աշխատել: Հինգ տարեկանից դասերից հետո նրա մոտ ժամերով սովորում էի քերականություն, պատմություն, աշխարհագրություն... և ընթերցանություն: Օրեր շարունակ նրա մոտ բարձրաձայն կարդում էի Մոլիեր և Ռասին, Ժորժ Դյուամել, մի քիչ մոռացված գրողներ, որոնց նա սիրում էր, նաև Մորիակ և Ժիոնո: Տատիկս ծնողներիս պես մեծ սեր ուներ ուսման հանդեպ, ու մանկությունս անցնում էր նրա անհանգիստ սպասումով, թե երբ կվերադառնամ նույնիսկ մի անկարևոր քննությունից:

Անգին շքեղություն էր: Ընտանիքս անհանգստանում էր ինձ համար, ու ինչ-որ պահերի նրանց մտահոգության պատճառը կարող էր լինել մի սովորական քննություն, մի էջ գրավոր: Ծնողներս հոգատարությունն արտահայտում էին Լեո Ֆերեի[2]

---

[1] Կարգերի հասարակություն - տեսություն, ըստ որի սոցիալական տարբերակումը հիմնվում է արժանապատվության և պատվի հիերարխիայի վրա: Այն բաժանվում է դասերի հասարակության (մարդկանց տարբերակում են ըստ հարստության և արտոնյալ խմբերի) և հասարակության (որոշիչ է կրոնական առաքինությունը): Այս մոդելը բնորոշ է նախ և առաջ ֆեոդալական հասարակարգին:

[2] Léo Ferré – Լեո Ֆերե (1916 –1993), Ֆրանսիայում ծնված պոետ և կոմպոզիտոր: Թողարկել է 40-ից ավելի ձայնասկավառակ, եղել երգերի մեծ մասի երաժշտության